ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

31-ը դեկտեմբերի 2024թ.

ՈՒՂԵՐՁ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Աբովյան համայնքի հարգելի՛ բնակիչներ.

Ավարտին է մոտենում 2024 թվականը, որը մեր համայնքի համար առաջընթացով և ամենատարբեր ոլորտներում ձեռքբերումներով լի տարի էր. տարվա ընթացքում պետություն-համայնք, համայնք-բնակիչ համագործակցություններով իրականացրել ենք նշանակալից ծրագրեր: Համայնքապետարանի գործունեության հիմքում շարունակել ենք պահել բնակավայրերի համաչափ զարգացման սկզբունքը և ըստ առաջնահերթության լուծել կենսական կարևորություն ունեցող բազմաթիվ խնդիրներ: Շարունակում եմ իմ ուշադրության կենտրոնում պահել բոլոր բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատություններ բացելու հարցը և այս տեսանկյունից 2024 թվականը հաջողված տարի էր. շահագործման հանձնեցինք Վերին Պտղնի գյուղի մանկապարտեզը, Գեղաշենի մանկապարտեզի նորակառույց մասնաշենքը, իսկ 2025 թվականի տարեսկզբին շահագործման կհանձնենք նաև Բալահովիտ բնակավայրի նորակառույց մանակապարտեզը: Անցնող տարում մեր համայնքի համար նախաձեռնել ենք նորարարական բազմաթիվ ծրագրեր, այդ թվում թենիսի կորտերի կառուցումը. եռօրյա մշակութային ծրագրով, ցուցահանդեսներով նշել ենք մեր հարազատ քաղաքի 61-րդ տարեդարձը: Շարունակել ենք կազմակերպել նաև Արցախից տեղահանված քաղաքացիներին առնչվող իրազեկման և աջակցությունների տրամադրման աշխատանքները:

Սիրելի՛ բնակիչներ.

2024 թվականը ամփոփում եմ՝ արձանագրելով համայնքային աշխատանքներում որակական աճ և տեսանելի առաջընթաց: Ուզում եմ՝ 2025 թվական մուտք գործենք առավել վստահ քայլերով, ձեզ հետ համատեղ, նոր ու նշանակալից աշխատանքների իրականացման ծրագրերով:

Տարեմուտին ընդառաջ առաջին հերթին սրտանց շնորհավորում եմ մեր հայրենիքի սահմանները անառիկ պահող զինծառայողներին, մաղթում եմ քաջառողջություն, անվտանգ ու խաղաղ ծառայություն:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ, թող որ գալիք տարում մեր հայրենիքում հաստատվի խաղաղություն, կայունություն և առաջընթաց:

Ամենաջերմ ու ամենաընտանեկան տոնի առիթով բոլորիս ընտանիքներին մաղթում եմ երջանկություն, բարեկեցություն և ամենայն բարիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ